

Ա Ձ Ձ Դ Ա Կ



112 ԱՄԵԱԿ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՅՍ ՕՐԸ

Հ.Յ. Դաշնակցության հիմնադրության 112րդ տարեդարձն է այսօր. տարեդարձը այն կուսակցության, որ հպարտաբեր պատմություն ստեղծեց ոչ միայն իրեն, այլ նաև՝ հայ ժողովուրդին:

Պարզ սովորույթամբ չէ, որ կը տօնուի այս տարեդարձը, այլ՝ իբրև առիթ անդրադառնալու այն գործին, զոր կատարած է Հ.Յ. Դաշնակցութիւնը մեր նորագոյն պատմութեան մէջ. հաղորդուելու այն ոգիին՝ զոր ստեղծած է ան մեր ժողովուրդին մէջ, դարերով օտար լուծերու տակ կքած, ընկճուած ու այլասերած իր կեանքով ու հոգիով:

Աւանդ մըն է Հ. Յ. Դաշնակցութիւնը, 112 տարիներու պատկառելի աւանդ մը, որ սակայն տարիներու թիւ չէ միայն, այլ՝ գաղափար է, գործ է: Գաղափար մը՝ որ վերացականութիւն չէ, այլ կենդանի ու գործօն արտայայտութիւն է, գաղափար մը, որ պանգոյացները կ'ոգեւորէ եւ շարժման մէջ կը դնէ: Հայրենիքի գաղափարն է ան. ազատ, անկախ ու միացեալ հայրենիքի գաղափարը, որ դարերով ներշնչած է հայ ժողովուրդը, հայոց պատմութիւնը դարձնելով շքեղ ալեկոծութիւն, զոհաբերութեան խորան հերոսապատում:

Դաշնակցութիւնը իր ծնունդով ու 112ամեայ գործունէութեամբ եկաւ բիրեղացնելու այս գաղափարը, հրեղէն գաղափար դարձնելով պայն: Կերտեց հայ քաղաքական միտքը, հայրենիքի գաղափարին շուրջ համախմբելով հայութեան գործօն, հաւատաւոր ու հայրենասէր բոլոր ուժերը:

Բայց Դաշնակցութիւնը միայն գաղափարի կուսակցութիւն մը չէր, այլ՝ գործի կուսակցութիւն մը: Գեղեցիկ է գաղափարը, սակայն առանց իրականացման, անբովանդակ խօսք է, անպտուղ մտամարպանք է: Դաշնակցութիւնը, գերազանցօրէն գործի կուսակցութիւն, ջանաց գաղափարը գործի՝ վերածել, պանգոյացները մղելով գործունէութեան ու զոհաբերութեան: Հաց ու ջուր դարձուց ան հայրենիքի գաղափարը, կենսական տարր՝ ապատութիւնը, բոլորին ներշնչելով այն համոզումը, թէ առանց ապատութեան անիմաստ է ամէն գաղափար, անհիմն է ամէն տուն ու հայրենիք: Այգերը ապատութեամբ ազգ են. առանց ապատութեան՝ ամբոխ ու անգոյն բազմութիւն են, ինչպէս հայրենիքները առանց անկախութեան եւ մշակոյթի հող են ու քար միայն:

Դարերու լուծին տակ կքած հայը մոռցած էր այս բոլորը, խաթարած էր ապատատենչ հոգին, պղտորած էր իր պայծառ գիտակցութիւնը: Հ. Յ. Դաշնակցութիւնը, հարապատ ծնունդը հայ լեղափոխութեան, ապա նուիրեալ դեկավարը անոր, վերստեղծեց հին ու ապատատենչ հայութիւնը: Վերակերտեց հայ հոգին՝ արեան մկրտութեամբ ու անչափելի զոհողութիւններով: Ստեղծեց նոր հայեր, որոնք ընդունակ եղան գաղափարներու համար պայքարելու, նոյնի՛սկ նահատակուելու: Այս հայերը, համեատ մշակէն մինչեւ մեծանուն մտաւորականն ու քաղաքագէտը, գիտցան նոր պատմութիւն ստեղծել. պայքարի, ապատութեան ու անկախութեան նուիրուած պատմութիւն, որուն էջերը գրուեցան մեծ զրկանքներով, անհուն զոհաբերութեամբ, հերոսական արարքներով: Տասնամեակները այնուհետեւ դադրեցան դէպքերու արձանագրութիւն ըլլալէ, դարձան դիւցապներգութիւն. մարդիկ դադրեցան այլեւս մահկանացուներ ըլլալէ, դարձան անմահներ՝ մահուան ճամբաներու վրայ, յանուն ապատութեան եւ անկախութեան, յանուն հայրենիքի եւ հայ ժողովուրդի բռնաբարուած բոլոր իրաւունքներուն:

Ամէն տարի, ահաւասիկ, այս պատմութիւնն է, զոր կը տօնենք. այս անցեալը, որ անցեալ մը չէ միայն, այլ՝ ներկայ մը ու ապագայ մը:

Արդարեւ, մեծարանքի նշում մը չէ 112ամեակի տօնակատարութիւնը, այլ՝ վերահաստատում մը գաղափարի ու գործի այն մնայուն արժէքներուն, որոնցմով զինուած՝ հայակերտ այս կուսակցութիւնը պիտի շարունակէ իր հաստատ երթը, իբրև «անկեղծ զինուոր»ը իր ժողովուրդին:



ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ...

Դաշնակցութիւնը ամբողջ մի վիպերգութիւն է, պայմական մի էփոփէ, որ յղացուել է կէս դար առաջ եւ աճում ու զարգանում է դեռ, ծաւալում ու խորանում է անընդհար հայ ժողովրդի կեանքի եւ գիտակցութեան մէջ: Դաշնակցութեան անդամները նրանք չեն միայն, որ արչանագրուած են կուսակցութեան փոմարներում, այլև բոլոր նրանք, որոնք երբեքիցէ ապրել, գործել ու նահապարկուել են Դաշնակցութեան դրօշի փակ: Մեզ հետ են միշտ, մեր մէջ են բոլոր մեր գաղափարական առաջնորդները եւ մարտիկները՝ հիմնադիրների սրբազան երրորդութիւնից սկսած մինչեւ այսօր բոլոր նրանք, որոնց մարմինը հանգչում է յայրնի կամ անյայտ գերեզմաններում, բայց որոնց հոգին միշտ մեր մէջ է, մեզ հետ իբրև ներշնչող, ուղեցոյց, մարտակից եւ առաջնորդ: Երբ Դաշնակցական ժողովները բանաչել են հանում, այդ բանաչելին քուէարկում են ոչ միայն ժողովին ներկայ եղողները, այլև՝ Քրիստոսափորները, Չաւարեաններն ու Ռոստոմները: Երբ դաշնակցական մարտիկը կոռի դաշտ է մեկնում, նրա կողքին են Արամ Արամեանները, եւ Բարգէն Սիւնիներն, եւ Սերոբներն ու Գեորգ Չաուշները, եւ Դոմանները ու Խեչոները:

Հ. Յ. Դաշնակցութիւնը մի եզակի ընդանիք է, մի բարոյական մեծ եղբայրակցութիւն, մի գաղափարական վեհ ուխտ, հայ ժողովրդի ծոցից դուրս եկած, հայկական միջավայրում ծնուած ու սնուած մի հզօր կուսակցութիւն: Այս իմաստով նա ինքը հայ ժողովուրդն է, հայութեան կազմակերպուած կամքը, նրա սրբեղծագործող հանձարի մարմնացումը: Նա ուրիշ կուսակցութիւնների նման չէ: Իր խորքով ու չեւով նա հայկական է, պարտողը հայ հողի, հայ ջրի, հայ սրբի, միսը մսից եւ արիւնը արիւնից հայ ժողովրդի, բնական ծնունդը հայկական միջավայրի, մինչեւ այժմ չկրկնուած ու դեռ երկար ժամանակ չկրկնուելիք:

Ս. ՎՐԱՅԵԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԱՄԵՆԱՅՆԻ ԼԻՆԵԼՈՒ Է ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆ, ԱԶԱԼՈՒՐՁ ԵՒ ՎՃՌԱԿԱՆ

«ԱԶԴԱԿ»ԻՆ Կ'ԸՍԷ Հ. Յ. Դ. Ի ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ԸՆԿ. ԱԼՊԷՐԹ ԱՃԷՄԵԱՆ

ՀԱՐՑՈՒՄ.- Տօները, ուրախութիւն եւ հպարտութիւն ներշնչելու կողքին, բարոյական հաշուեկշիռ ներկայացնելու պահեր են: Իր հիմնադրութեան 112րդ տարեդարձին առիթով Հ. Յ. Դաշնակցութիւնը այսօր ի՞նչ հաշուեկշիռով կը ներկայանայ հայ ժողովուրդին:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Հ. Յ. Դաշնակցութիւնը իր 112ամեայ անցելով, քաղաքական կուսակցութիւն լինելուց բացի, եղել է, է եւ լինելու է նաեւ գաղափարական շարժում:

Այդ պատճառով Հ. Յ. Դ. ի պատմական դերի եւ նրա ներկայ քաղաքական գործունէութեան հաշուեկշիռներին առաւել, կարծում եմ անհրաժեշտ է, մանաւանդ այսօր որպէս հայրենիքում կայացած ու գործող կուսակցութիւն՝ ծանրանալ Հ. Յ. Դ. ի գաղափարական հաշուեկշիռի վրայ՝ թէ ինչ գաղափարական քրեատոներ, ինչ գաղափարական հաւատամքներ ունի նա 112 տարի յետոյ:

Հ. Յ. Դաշնակցութիւնը այսօր հանդէս է գալիս վերանորոգուած իր գաղափարական արժէքների համակարգով՝

- Ազգերի համահաւասար, ինքնիշխան եւ կամաւոր եղբայրակցութեան հիմամբ իր ազգայնութեամբ:

- Ընկերային արդարութեան եւ համերաշխութեան ուղղուածութեամբ մենաշնորհների, դասակարգային ճեղքուածութեան եւ հասարակական խտրականութեան բացառման սկզբունքով՝ իր ընկերվարութեամբ:

- Պետական, քաղաքական, տնտեսական եւ մշակութային բովանդակ բնագաւառների կառավարման եւ հսկման գործում՝ ժողովրդի տեսակէտին ու կամքին առաջնայնութիւն տալու սկզբունքի վրայ՝ իր ժողովրդավարութեամբ:

- Վատը լաւով, ժամանակավրէպը առաջադէմով եւ անարդարը արդարով փոխարինելու վճռակա՛նութիւնից բխող իր յեղափոխական բնութագրով...

Հ.- Ի՞նչպէս կը բնորոշէք դաշնակցական մարդը այսօր, սեփական ինքնութեան, յիշողութեան եւ դիմագիծի կորստեան համաշխարհայնացումի ժամանակաշրջանին:

Պ.- Համաշխարհայնացման հարցը նախ եւ առաջ գաղափարաբանական հարց է: Առանց գաղափարական ճամբի հարթեցման, անկարելի է թւում լիարժէք իրականացնել համաշխարհայնացումը:

Ըստ էութեան, համաշխարհայնացման գաղափարական արժէքաբանութեան սլաքը ուղղուած է ազգային գաղափարական ուրոյն շարժումների, այդ թւում նաեւ՝ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ:

Սակայն համաշխարհայնացումի կլուպի տեսական մերժումը ոչ միայն անտրամաբանական



է ու անիրատեսական, այլ նաեւ քաղաքական կուսակցութեան աստիճանաբար մղելու է դէպի լուսանցքային եզրեր: Ինչպէս վաղ դրամատիրութեան ժամանակներում «արդիւնաբերական յեղափոխութիւնը», այնպէս էլ մերօրեայ համաշխարհայնացման ժամանակներում «տեղեկատուական յեղափոխութիւնը» ստեղծել է մարդկային մտքի ու կեանքի այնպիսի վերելք, որից հեռու մնալու փորձերը էապէս յետադիմական են եւ դատապարտուած՝ ձախողութեան:

Ճիշդ այստեղ է կայանում յանձնառու դաշնակցական մարդու տեսակը՝ գաղափարապէս մերժելով համաշխարհայնացման բոլոր բացասական կողմերն ու արժէքները, տիրապետել քաղաքական եւ հասարակական պայքարի արդիական արհեստին եւ այն հունաւորել մեր գերագոյն նպատակների իրականացման ուղղութեամբ:

Հաւատացած եմ, որ այս ձգտման մէջ միայնակ չենք մենք: Համայն աշխարհի գիտակից մարդկութիւնը շարժւում է համաշխարհայնացումի բացասական երեւոյթները թօթափելու ուղղութեամբ: Այլ բառերով՝ այսօր համաշխարհայնացման դէմ համադրաբար աշխատում է զանազան ազգութիւնների առաջատար գաղափարական շարժումներից առաջացող մոնտիալիզմը:

Սա բխում է այն պարզ իրողութիւնից, որ մարդը շարունակում է մնալ որպէս գերագանցապէս խորհող, մտածող եւ իր խեղանքների նկատմամբ հաւատք տածող էակ:

Հ.- Դաշնակցական յաջորդական սերունդներու երազն էր անկախ Հայաստանի կերտումը: Այսօր, Հայաստանի անկախութեան եւ Դաշնակցութեան հայրենիքի մէջ վերընծիւղումէն 12 տարի ետք, ինչպիսի՞ Հայաստան մը կ'առաջադրէ տեսնել կուսակցութիւնը. ի՞նչ պայմաններ կը խոչընդոտեն անոր:

Պ.- Հ. Յ. Դաշնակցութիւնը, մեկնելով իր գաղափարական հայեացքներից ու համոզումներից, հետամուտ է ստեղծելու տնտեսական-ընկերային արդարութեան եւ համերաշխութեան հիմունքներով ու կատարեալ ժողովրդավարական կարգերով ազգային, իրաւական պետութիւն: Այդ նպատակի իրականացմանը այսօր խոչընդոտ են հանդիսանում մէկ կողմից տարածաշրջանում մեծապետական ուժերի նկրտումների

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Դաշնակցութիւնն սրեղծեց մի նոր հայութիւն, գիտակից եւ մարտունակ, որով մեր ազգը պարկառուի դարձաւ հարեւանին եւ քննամուն: Այս հիմնական յեղաշրջման մասին կարող են վկայել նրանք, որ ապրած են ուրսունական թուերին եւ մեծցած են մեր զարթոնքին զուգահեռ: Հիմա մենք ունինք մի ռազմունակ եւ առողջ հայութիւն մեր Հայրենիքի մէջ: Այդ հայութեան հոգին առողջացաւ եւ հլու ռազմիկ դարձաւ Դաշնակցութեան դրօշի տակ: Դրօշը հիմա փոխուած է այնպէս, բայց դրօշակիրը աշակերտն է «դաւաճան» Դրոյի եւ «հայրենասիրեաց» Դաշնակցութեան: Մեզ համար դրօշակիրն է կարեւոր, որ նոր հայն է եւ մեր կերպած սերունդի զաւակը: Ապահովուած է հայութիւնը իր պարտախնդիր եւ մարտունակ զանգուած. նա կարող է մեռնիլ, մինչեւ իսկ չքանալ, բայց զէնքը չեղքին եւ կործանի զարնուած: Այս հրաշքը Դաշնակցութեան գործն է. խիզախ եւ ռազմունակ հայութիւնը Դաշնակցութեան զաւակն է, եւ զուր են ջանքերը հայրը որդուց բաժնելու:

Հանգիստ խղճով է պայծառ հայեացքով նայում են կուսակցութեան անցեալին: Կորած ու մոլորած մի ժողովուրդ դարձնել ռազմունակ մի ազգ եւ քաղաքական կեանքով ապրեցնել ծիակահանին, տալ նրան հայադէմ հայրենիք ու պերտութիւն, դնել նրա ապագայ մշակոյթի հիմնարարները՝ սրանք գործեր են, որ կատարեց Դաշնակցութիւնը յամառօրէն եւ անթիւ զոհերի գնով: Նա կատարեց իր պարտական պարտականութիւնը. եղաւ ազնիւ, անչնուէր եւ հաւատարիմ վարակաւոր. չվարանեց ոչ մէկ զոհողութեան առջեւ եւ հիմա հանգիստ նայում է իր գործին, որ զարգանում է Արարարի շուրջ տակ: Իր ոգին ապրում է Հայաստանում: Երբ ժամը հնչէ, այդ ոգին իբր ուժանակ պիտի ծաւալի դէպի արեւմուտք եւ հարաւ, հասնելու համար այն սահմաններին, որ գծած է Դաշնակցութիւնն իբր բնավայր հայ ժողովուրդի: Ուրիշ դրօշով, բայց մեր ոգին է, որ պիտի ամբողջացնէ մեր չեղնարկած մեծ գործը:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

Պէյրութ, 1945

իբրեւ հետեւանք որոշ արտաքին սահմանափակումներն ու պարտադրանքները, իսկ միւս կողմից, նախկին՝ խորհրդային վարչակարգից ժառանգած, ինչպէս նաեւ անհակազիւ, սանձարձակ ազատ շուկայական պայմաններում ստեղծուած ներքին քլանային համակարգը, փտածութիւնը, չկայացած անկախ դատաիրաւական կարգերը եւ այլն: Սրանց վերացումը ենթադրուած է ծրագրաւորուած, երկարաշունչ ու հետեւողական պայքար եւ աշխատանք:

Հ.- Հայաստան թեւակոխած է ընտրական երկար փուլ մը. որ անցնող Հոկտեմբերին սկսաւ տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութեամբ եւ կը շարունակուի յառաջիկայ Փետրուարին եւ Մայիսին տեղի ունենալիք նախագահական եւ Ազգային ժողովի ընտրութիւններով: Ի՞նչպէս կարելի է ներկայացնել Հ. Յ. Դաշնակցութեան դիրքը քաղաքական ընդհանուր տեսադաշտին մէջ: Որո՞նք են յառաջիկայ ընտրութիւններուն զինք առաջնորդող գլխաւոր սկզբունքները:

Պ.- Բնականաբար վերոյիշեալ նպատակները իրականացման գծով Հ. Յ. Դաշնակցութիւնը Հայաստանի քաղաքական դաշտում գտնուող, կայացած կենտրոն ձախ այն ուժն է, որ հայաստանեան քաղաքական առաջնահերթութիւններին գուզահեռ, իր համահայկական տարածուն կառոյցով միաժամանակ հետամուտ է նաեւ հայ ազգի ոտնահարուած բովանդակ իրաւունքների ձեռքբերմանը: Հետեւաբար յառաջիկայ ընտրութիւններում Հ. Յ. Դաշնակցութեան համար հիմնական են հետեւեալ սկզբունքները.-

Ա.- Առաջադրում կամ պաշտպանութիւն ազգային շահերին ու նպատակներին հաւատարիմ թեկնածուների՝ ի հարկին առաջ քաշելով նաեւ ոչ կուսակցական արժանաւոր ազգայիններին:

Բ.- Ազատ ու արդար ընտրութիւններ կայացում, որը իր անվիճելի դրական ազդեցութիւնն է ունենալու թէ՛ արտաքին՝ պետական եւ թէ՛ ներքին՝ ժողովրդական մակարդակներում:

Գ.- Ապահովել լայն ժողովրդական մասնակցութեամբ ընտրութիւններ, որը կարելու է չփանիչ է նաեւ իրաւ ժողովրդավարականացման գործընթացում:

Հ.- Հայ Դատը կը հանդիսանայ Հ. Յ. Դաշնակցութեան գոյութեան գլխաւոր իմաստը:



Ի՞նչ մարտահրաւերներու դիմաց կը գտնէ կուսակցութիւնը ինքզինք՝ Հայ Դատի հետապնդման իր նիւթերուն մէջ:

Պ.- Հայ Դատի հետապնդումը, ինչպէս միշտ, մնում է Հ. Յ. Դ. քաղաքական գլխաւոր նպատակը, նրա մնայուն օրակարգը...

Սակայն դատի լուծման քաղաքական պայմանները սրընթաց եւ վիթխարի փոփոխութիւնների մէջ են այսօր:

Արցախեան հիմնահարցում ռազմական յաղթանակի հասնելուց յետոյ, նոյնքան կարելու է Հ. Յ. Դ-ի համար այսօր ուղղակի թէ՛ անուղղակի

բոլոր միջոցներով սատարել հիմնահարցի քաղաքական-դիւանագիտական արդար լուծման գործընթացին՝ որպէս Հայ Դատի այժմեան ամենանշանակալից հանգրուան: Երջանի աշխարհաքաղաքական ու վրաստանի ներքաղաքական օրոստօրէ բարդացող պայմաններում Զաւախքի ու վիրահայութեան Ֆիզիքական անվտանգութեան, ընկերային-տնտեսական վիճակը ճգնաժամից հանելու, նրա մարդկային իրաւունքներին ու մշակութային վերելքը ապահովելու հարցերը եւս Դաշնակցութեան համար միւս կարեւոր մարտահրաւէրն է համարուում:

Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների բնականոնացման խնդիրը ներկայիս յատկապէս Միացեալ Նահանգների ու իր դաշնակիցների կողմից դիտուում է որպէս կովկասեան շրջանի կայունացման բանալի գործօն, իսկ Յեղասպանութեան հարցը, ինչպէս նաեւ Արցախի հարցի հանգուցալուծումը փաստօրէն խոչընդոտ են համարուում: Հաւանաբար աւելորդ չէ նշել, որ մեծապետական ուժերի ու մասնաւորաբար Մ. Նահանգների նախաձեռնութեամբ ու Ֆինանսներով հայ-թրքական այսպէս ասած հաշտութեան գործընթացը սահուն դարձնելու մեծ ու խոշոր ծրագրեր են հրապարակ նետուած, որոնք սակայն, ըստ էութեան, մերժելի են Դաշնակցութեան համար: Մի հաշտութիւն, որ մեր համոզմամբ առանց Հայ Դատի հիմնական եւ արդար լուծումով, լինելու է խախուտ, թերի եւ յատկապէս՝ դիւրաբեկ քաղաքական ցանկացած վարքագծից: Սա եւս այսօր կարելու է մարտահրաւէր է վերը նշուած համաթեքսթում: Հ. Յ. Դաշնակցութիւնը ըստ ամենայնի լինելու է հետեւողական, աշալուրջ եւ վճռական՝ որպէս Հայ Դատով իր գոյութեան իմաստը արդարացնող գաղափարական շարժում:

ՉՕՆ՝ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

«Իմ յուշեր»-ու այս առաջին հատորը Քեզի կ'ուզեմ նուիրել՝ հայ ազգի հոգեկան եւ գաղափարական կեանքը կերպող Մեծ Վարպետի:

Իմ կեանքի պայմանօրինակ չէ, որ կը պայմանօրինուի հոս, այլ՝ Քո՛ւ կեանքի, Քո՛ւ ապրումներու եւ Քո՛ւ անցած փշոյր ու արիւնաների ուղիներու պայմանօրինակ, Դո՛ւ, իմ քանկազին հիւսուորաց հսկայ:

Ես Քո սրեղծագործութիւնն եմ մէկը հազարներու հեւ. սպասաւոր մը Մեծ ու Սրբազան առաքելութեան:

Իմացական կեանքիս վաղորդայնին սիրեցի եւ փարեցայ քեզի՝ իբրեւ խարիսխի մը ամրակոտ եւ դեկի մը հաւապարիմ: Ու յենած Քո բարոյական ու բիրեղ գաղափարաբանութեան անպարսկ, անվիպար ու հաւապարիմ ես եւս, հազարներու հեւ, չգրեցի բարչրութիւններու եւ քալեցի Քո ցուցուցած ճամբաներով: Փոթորկոյր, անհարթ ու փառապալի այդ ճամբաներու մէջէն Դո՛ւն եղար իմ ուղեցոյցը, առաջնորդը եւ պաշտպանը գորովոյ:

Դո՛ւ սորվեցուցիր մեզի պաշտել մեր սրեղծագործ ժողովուրդը եւ անոր առջեւէն քալել:

Սորվեցուցիր մեզի արհամարհել աննպարսկ, կենդանական կեանքը, մոռնալ մեր անչը եւ նուիրուիլ մարդկութեան եւ, մանաւանդ, մեր ազգային ազար գոյութեան պահպանման:

Սորվեցուցիր մեզի պայքարիլ եւ, ի հարկին, զոհուիլ Հայրենիքի եւ անկախութեան համար...:

Ու մեզմէ շարերը այդ ճամբով գացին եւ ինկան անվարան ու երջանիկ:

Հպարտ ենք Քեզմով, աննման Մեծ Վարպետ, եւ խորապէս երախտապարտ:

Ապրեցար 60 տարիներ: Ներքին եւ արտաքին փոթորիկները չկրցին սարսել խորամարտ կաղնին: Դո՛ւն կաս ու պէ՛տք է մնա: Արմապոյ՝ առողջ եւ ճիւղերդ դալար ու կենսունակ բողբոջներով զարդարուն: Եւ երբ Դո՛ւ կաս, մենք սլ կանք՝ Քո հովանիին տակ... Միշտ պարտաւոր:

Հազար անգամ խոնարհութիւն Քեզի:



ՄԻՇՏ ՆԵՐԿԱՅ



մահ» գոռալով կը նախընտրեն մեռնիլ, որպէսզի գալիք սերունդները ապրին:

Հայ ժողովուրդի վերջին մէկ դար ու տասնամեակի պատմութիւնը կը խօսի Ներկայի մը, Հերոսի մը եւ Ազատատենչի մը մասին:

Այդ պատմութիւնը կը վկայէ Հ. Յ. Դաշնակցութեան մասին, իբրեւ յեղափոխական տարերք, գաղափարական լիցք, կազմակերպական ուժ եւ համաժողովրդային ալիք:

Բանանք իր հիմնադրութեան օրէն մինչեւ այսօր երկարող 112 տարիներու Դաշնակցութեան հաստատման մտեանը, թերթատենք էջերը ու պիտի տեսնենք այս հսկայ Ներկան, որ բաժնեկցած է մեր ժողովուրդի առօրեային, անոր հետ ապրելով մանաւանդ սեւ եւ մութ օրերը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայ եղած է ամենուրեք.

թէ՛ աշխարհագրական եւ թէ՛ մարզային իմաստով:

Ստրկութեան մէջ է հայ ժողովուրդը: Ներկայ է Ան:

Հարստահարութեան, բռնաբարումի, ջարդի՝ կ'ենթարկուի հայ ժողովուրդը: Ներկայ է Ան:

Յեղափոխական կռիւի անհրաժեշտութիւնը ունի հայ ժողովուրդը: Ներկայ է Ան:

Երկիրի մէջ ուսումի, ցանքի ու հացի կարիքը ունի հայ ժողովուրդը: Ներկայ է Ան:

Քաղաքական գործով ու դիւանագիտական արշաւով նպաստ կայ հայ ժողովուրդին: Ներկայ է Ան:

Համաժողովրդային պոռթկումով ազատութեան ու անկախութեան կռիւ է հարկաւոր: Ներկայ է Ան:

Տարողնուած հայութեան գաղութային կեանքի կազմակերպութեան հրամայական պահանջ կայ: Ներկայ է Ան:

Ցեղասպան թուրքը պատժելը այլեւս անյետաձգելի է: Ներկայ է Ան:

Հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներու հետապնդումն ու միջազգային ամպիոններու դռներու թակումը անհրաժեշտ է: Ներկայ է Ան:

Գաղութները վտանգուած են եւ հայութեան ինքնուրոյն դիմագիծը սպառնալիքի ենթակայ է: Ներկայ է Ան:

Արցախն ու Հայաստանը զի՞նք կը կանչեն: Ներկայ է Ան:

Ներկայ է ամենուրեք: Իր լաւագոյն «տղերք»ով:

Ներկայ է ամենուրեք, հայ մանուկին, երիտասարդին, երեցին հետ: Կնոջ ու այրիիօն հետ:

Ներկայ է ամենուրեք, հայ բանուորին, գիւղացիին, մտաւորականին, զինուորին, արուեստագետին ու քաղաքական մարդուն, գործատիրոջ ու արհեստաւորին կողքին:

Ներկայ է գէնքով, գրիչով, բահով ու քրտինքով:

Ներկայ է Ան, տեւաբար առաջին խրամին մէջ, նակատի առաջին գիծին վրայ:

Ներկայ է իր շարքայիններով, երեց ու երիտասարդ, բայց մանաւանդ համակիրներու իր հոծ բազմութեամբ:

Եւ ահա գոյութեան, գոյատեւման եւ ունեացման իր գաղտնիքը:

Չուլումին ու հալածանքին դէմ մնաց Ան:

Օսմանցիէն մինչեւ ցար, համայնավարութենէն մինչեւ կայսերապաշտութիւն, հայանուն դաւանանքէն մինչեւ քաղաքական իմաստակներ, հալածեցին, հարուածեցին, բանտարկեցին, սպաննեցին, առեւանգեցին դաշնակցականները:

Դաշնակցականները ինկան քաջօրէն, բայց Դաշնակցութիւնը մնաց:

Ունեցաւ ներքին դժուարութիւններ եւս: Տկարութիւններ ճանչցաւ, բախտախնդիրներ մտան իր շարքերը, եսակեդրոն ու շահամոլ անձեր փորձեցին անձնականը գերադաս նկատել հաւաքականէն, Դաշնակցութիւնը սեփական հաստատութեան հետ շփոթողներ փորձեցին գոյատեւել: Չախողեցան բոլորը: Խնաքարերը ծովուն ափը նետուեցան, իսկ Դաշնակցութեան ծովը պահեց ժայռերը:

Դաշնակցականները սխալեցան թերեւս: Կրնան սխալիլ վաղը եւս: Սխալողները կը մնան դուրս:

Դաշնակցութիւնը սակայն մնաց ճիշդ ուղիին վրայ:

Ներկայ, միշտ իր ժողովուրդին հետ ու ժողովուրդին համար:

Ու մնաց ամուր դիմագրաւելու համար իր գոյութեան ու գործին երկրորդ դարը:

Պատմութիւնը կը խօսի ներկաներու մասին: Անոնց մասին, որոնք սրբազան խենթութեամբ գիտեն նգնաժամի պահուն բարձրադակ գոչել՝ ներկայ:

Պատմութիւնը կը խօսի հերոսներուն մասին:

Անոնց մասին, որոնք սրբազան նահատակութեամբ գիտեն յաւերժացնել իրենց ազգը:

Պատմութիւնը կը խօսի ազատատենչերու մասին:

Անոնց մասին, որոնք «ազատութիւն կամ

ՈՒՒԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

... Ասոնք էին ազգայնականները, դաշնակները, որոնք կոռուեցան Հայաստանի համար, վասնզի կոխը իրենց գիպցած միակ ուղին էր պահպանելու համար կեանքը, արժանապարտութիւնը եւ ցեղը: Աշխարհը արկէ փարթեր միջոց մը չունէր: Միայն զէնքով կ'ըլլար այդ: Դիւանագետները ժամանակ չունէին Հայաստանի համար եւ զէնք միջոց մըն էր այդ, Աստուծոյ անիծած ոջլոյր միջոցը, բայց դաշնակցականները մեծ մարդիկ էին եւ ըրին այն, զոր պարտաւոր էին ընել: Իսկ ռեւէ հայ, որ կ'արհամարհէ այս մարդիկը, փոքր է կամ իր ցեղին մարմնիչը: Այս մարդոց ընկրած ուղին սխալ էր, գիտեմ որ սխալ էր, բայց արկէ զար ուրիշ միջոց չունէին անոնք: Է՛հ, անոնք շահեցան պարտերազմը:

Այսպէս կամ այնպէս ամբողջ ցեղը բնաջնջուեցաւ: Հայաստանի ժողովուրդը կը մտէր, անօրի էր եւ հիւանդ, բայց այս զինուորները շահեցան պարտերազմը եւ ազգ մը դարձաւ կառավարութեամբ եւ դաշնակներով կազմուած քաղաքական կուսակցութեամբ մը:

Շարք փոխուր եւ շարք սրբայոյզ է, երբ կը մտածէք այն հազարաւորներու մասին, որոնք սպաննուեցան, բայց ես կը պարտեմ զինուորները, անոնք, որ մեռան, եւ անոնք, որ կ'ապրին փակաւիւն: Կը պարտեմ եւ կը սիրեմ զանոնք: Աղէտալի սխալ մըն էր այդ, բայց ազնիւ սխալ մը, եւ Հայաստան եղաւ Հայաստան:

Անշուշտ շարք փոքր ազգ մըն էր ան, շարք անկարելու ազգ մը, ամէն կողմէ բշտամիներով շրջապարտուած, սակայն Հայաստանը երկու փարթի մնաց Հայաստան եւ Երեւանը մայրաքաղաք: Հարիւրաւոր փարթներ ետք առաջին անգամ ըլլալով Հայաստանը եղաւ Հայաստան:

Գիտեմ, թէ ո՞րքան անմիտ բան է հպարտ ըլլալ, բայց չեմ կրնար յաղթել այդ զգացումիս եւ հպարտ եմ:

ԴԱՐԱՒՈՐ ՀԱՒԱՏԱՒՈՐ

Ծնաւ օտարութեան մէջ՝ Հայրենիքին համար:

«Դէպի Երկիր» շեփորեց եւ սերունդներ ոտքի հանեց:

Անոնք հաւատացին իրեն, ինք՝ իրեն եկած սերունդներուն:

Արիւնոտ Երկրի մէջ դարձաւ «վերքերով լի ջան ֆետա», սակայն բնաւ ձեռքէն վար չձգեց պայքարի դրօշը, որովհետեւ հաւատաց իր ժողովուրդին լուսաշող ապագային:

Ունեցաւ Ծրագիր, որովհետեւ հաւատաց ազգային եւ ընկերային արդարութեան՝ իր ազգին համար, բոլոր ազգերուն եւ համայն մարդկութեան համար:

Ունեցաւ կանոնագիր, որովհետեւ հաւատաց կազմակերպ ուժին, անոր հրաշքին:

Չդարձաւ դասակարգի մը եւ անոր շահերուն ներկայացուցիչը: Իր մէջ համախմբեց հայ ազգի ազնիւ որդիները՝ մշակ, բանուոր, մտաւորական եւ գիտնական. աղքատն ու հարուստը, գիւղացին ու քաղաքացին եւ պաշտպանեց հայութեան բովանդա՛կ շահերը: Պաշտպանեց արեւմտահայը, արեւելահայը, սփիւռքահայը, որովհետեւ հաւատաց Ազգի անբաժանելիութեան:

Ո՛չ մէկ բան խոստացաւ իրեն եկողներուն. ո՛չ փառք, ո՛չ պատիւ, ո՛չ հարստութիւն: Ընդհակառակը, պահանջեց անսակարկ զոհողութիւն, եթէ հարկ ըլլայ, նա՛նք արիւն՝ տանջուած Հայրենիքի սիրոյն: Եկան իրեն սերունդ-սերունդ, դարձան ֆետայական խումբ, կամաւորական գունդ:

Գրիչ բռնեց սուրի նման: Երգեց երգեր եւ հերոսներ, գրեց յուշեր, հիւսեց վէպեր, ոգեշնչեց նոր սերունդներ:

Ազգին եւ ազգայինին դէմ ելլողը զինք թիրախ ընտրեց:

Ովքեր ըսես, որ իր մահը չփնտոցեցին: Իր լաւագոյնները, ազնուագոյնները կախաղան բարձրացուցին, բանտերու մէջ տանջեցին, անարգաբար առեւանգեցին, սպաննեցին: Ինք՝ Խաչ Պատերազմին իր աչ թեւին՝ գործի դաշտէն կոչեց.

«Կենդանի՛ եմ տակաւին»:

Իր դէմ ելան կայսրութիւններ, կործանեցան, պատմութեան անցան: Ինք կանգուն մնաց, հայուն կոացած մէջքը շտկեց, անոր ինքնավստահութիւն ներշնչեց, անկէ ժողովրդային բանակ կազմեց:

1911ին իր Ակնունդին ընկերներուն այսպէս գրեց. «Նայեցէ՛ք միշտ Դէպի Երկիր եւ հաւատացէ՛ք նրա ապագային: Ես հաւատ ունիմ, ապառաժ հաւատ, որ շատ տարիներ չանցած, շատեր ներկայ սերնդից, որոնք դեռ սպիտակ մազ չունեն եւ բախտ ունեն, այժմ թոթովախօս են անվստահ, կը մեծան, կը բարձրանան քաղաքական պայքարի սանդուխները եւ կ'երթան բազմելու հայ ժողովուրդի Ներկայացուցչական Ժողովի՝ Հայկական Պարլամենտի մէջ՝ մօտաւոր իջեւանը մեր քաղաքական յաղթանակի: Ու եթէ մի օր ձեզանից մէկը, իմ ընկերներ, արժանանայ այդ չքնաղ

բախտին, թող յիշի, որ իմ ասածը մարգարէութիւն չէ, այլ միայն հաւատ, անխախտ հաւատ դէպի այն ճամբան, որ թէեւ արեւմբ ներկուած՝ միշտ առաջնորդում է դէպի աշխատանքի եւ գաղափարի յաղթադաշտը»:

Յեղասպանութիւնը հայաթափեց Արեւմտահայաստանը, ինք կերտեց անկախութիւն, հիմնադրեց հանրապետութիւն:

Եւ եղաւ Հայաստանի խորհրդարան, ունեցանք երեսփոխաններ:

Ինկաւ Հայաստանի անկախութիւնը, ըսին՝ «Մեռաւ Դաշնակցութիւնը: Չունի ընելիք եւ ոչ ալ գալիք»:

Ինք Արդարահատոյց կազմակերպեց: Ցոյց տուաւ աշխարհին, թէ Հայկական Հարցը չէ փակուած տակաւին, թէ ան կը շարունակէ քաղաքական պայլար մը մնալ, թէ նոր Սփիւռքի կազմաւորման հետ քաղաքական մարտունակ շարժումի ամրակոտ ենթատարերք մը գոյութիւն ունի իր կազմակերպական շրջագիծին մէջ:

Աւելին. Յեղասպանութեան յիսնամեակին Սփիւռքը կազմակերպուած զօրաշարժի մղեց: Հայ Դատ հետապնդեց: Երբ այդ ճակատին վրայ իր գործունէութեան թափ տուաւ, Խորհրդային Հայաստանը բոլոր կառոյցներով իր դէմը ելաւ, իսկ ինք ներսփիւռքեան ազգային միասնութեան ճամբան հարթեց: Սփիւռքին պահանջատիրական դիմագիծ տուաւ:

Գործեց Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսլականով:

1968ին իր Սիմոն Վրացեանը մահուան անկողինին մէջ այսպէս պատգամեց. «Երբեք չեմ կորսնցուցած իմ հաւատքս հայ ժողովուրդին նկատմամբ: Մեր ժողովուրդը երբեք չէ չի կրնար մեռնիլ: Այսքան երկար տարիներու անստուգութեան եւ վերիվայրումներու մէջ կենդանի պահած ենք մեր ազգային գիտակցութիւնը եւ մեր անկախութեան ոգին: ... Այսօր աշխարհը այնքան արագ փոփոխութեան կ'ենթարկուի, որ անկարելի է ըսել, թէ պիտի չստեղծուի նոր կացութիւն մը, որուն շնորհիւ անկախ Հայաստանը վերստին իրականութիւն դառնայ»:

Եւ Հայաստանը վերանկախացաւ:

Ըսին. «Դաշնակցութեան ընելիք չմնաց»: Սակայն այդպէս չեղաւ: Իրեն համար ազատագրական պայքարի եւ հայրենաշէն գործի նոր հորիզոններ բացուեցան: Կրկին անգամ «Դէպի Երկիր» շեփորեց ու, հակառակ իր դէմ ցցուած բազմաթիւ դժուարութիւններուն, իր կարելիութիւններուն առաւելագոյնը տրա-



մադրեց հայրենիքին ու անոր Դատին:

Ազգի անունով իր մասին ըսին ու կրկնեցին. «Մեղաւոր է Դաշնակցութիւն», ինք շարունակեց ու կը շարունակէ վայելել վստահութիւնը ազգին:

Յանուն հայ ազգին եւ անոր նպատակներուն՝ անմնացորդ նուիրաբերում,

Անոր դատին՝ արի՛ւն,

Ապագային՝ անխախտ հաւատք:

Ա՛յս է Դաշնակցութեան գործն ու պատմութիւնը: Ասոնցմով միայն ան հարուստ է: Ասոնցմով ան իրայատուկ է: Ասոնց մէջ են իր հօգորութիւնն ու ամբողջութիւնը:

Անցեալ աւելի քան մէկ դարու հայոց պատմութեան իրադարձութիւնները տրամաբանօրէն կը յուշեն, թէ Դաշնակցութիւնը այսօր գոյութիւն պիտի չունենար: Սակայն կեա՛նքը հակառակը կը հաստատէ: Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա, եթէ ոչ պայքարի ա՛յն անխոնջ հաւատքով, որ ի՛րը եղաւ: Ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ, չի՛ կրնար ըլլալ, այնքան ատեն որ Ազգը անկատար երազ ու մտրազ ունի դեռ:

Դաշնակցութիւնը պիտի շարունակե՞ ապրիլ ու գործել: Պէտք է նայիլ անոր դարաւոր պատմութեան:

Պիտի հասնի՞ իր նպատակներուն: Պէտք է հաւա՛տք ունենալ:

Այո՛, դարաւոր, բնա՛ւ ալեւոր, Դարաւոր՝ գործօ՛ն հաւատաւոր, Ի՛նչ կուսակցութիւն, Այլ՝ Դաշնակցութի՛ւն, 112 ողջոյն:

ՈՒՏԻՆ ԵՒ ՀՄԱՅՔԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԿԵԱՆՔԻ ՄԷՉ

Ընդհանուր առումով ի՞նչ եղաւ Դաշնակցութեան դերը Հայ կեանքին մէջ:

Հասունցած մարդիկ էին Գրիստափորը, Սիմոնը եւ Ռոստոմը, երբ հիմնադրեցին Դաշնակցութիւնը: Դեռ անուանապէս Դաշնակցութիւնը չծնած՝ անոնք փաստօրէն դաշնակցականներ էին արդէն: Այս իմաստով Դաշնակցութեան գաղափարները շատ աւելի հին անցեալ ունին, քան Դաշնակցութեան գործերը: Այդ գաղափարներուն ակունքները գտնելու համար հարկ է դառնալ դէպի ետ, դէպի մեր պատմութեան խորհրդաւոր արշալոյսը, ուր մեր նախնիք հայկական ազգութիւնը շողախեցին, կերտեցին մեր հոգեկան ինքնատիպ աշխարհը եւ անկախութեան ոգի դրին մեր մէջ:

Դառն եղաւ մեր ժողովուրդի ճակատագիրը: Ոչ թէ բռնակալներ, այլ բռնակալ դարեր տրորեցին մեզ:

Մէկ էինք կրօնքով ու դարձանք բազմակրօն: Մէկ էինք լեզուով ու դարձանք բազմալեզու:

Մէկ էինք հայրենիքով, զրկուեցանք անկէ ու չունենալով մէկը՝ ունեցանք քանի մը հայրենիքներ, իրարմէ բաժան եւ իրարու անծանօթ:

Կարճ՝ լուսաւորչական հայեր էինք, միալեզու ու միացեալ Հայաստանի մէջ, սակայն դարձանք յարանուանացած ու հատուածացած բազմաբարբառ հայեր, օտարացած եւ բաժան - բաժան պարսկապատկան, թրքապատկան եւ ռուսապատկան Հայաստաններու մէջ:

Ճիզիբապէս դարաւոր հարուածներուն տուկալով՝ մնացինք իբրեւ հող ու ամբոխ, ուր հողը հայրենիք էր այլեւս, ո՛չ ալ ամբոխը՝ ազգ:

Մեր պատմութեան բերումն էր այս եւ ոչ մեր ազգային գիծը:

Եւ, որ ամէնէն ծանրն է, այսպէս եղանք ո՛չ միայն դուրսէն ազգային եւ պետական կառոյցով, այլեւ ներսէն՝ մեր հոգեկան կերպարանքով:

Դարեր շարունակ օտար բռնակալութիւնները բազմած մնալով մեր ուսերուն՝ աննկատ եւ աստիճանաբար մեր ուսերէն իջան եւ տեղաւորուեցան մեր հոգիներուն մէջ. բաժան - բաժան եղաւ ո՛չ միայն մեր հայրենիքը, այլեւ՝ մեր հոգին. փշուր - փշուր եղաւ ո՛չ միայն մեր մարմինը, այլեւ՝ մեր ազգային իտէալը. օտարին կեր դարձաւ ո՛չ միայն մեր հողեղէն տունը, այլեւ՝ մեր հոգեկան խորանը:

Ոչ միայն Ռուսահայաստան, այլեւ՝ ռուսահայ:

Ոչ միայն Թրքահայաստան, այլեւ՝ թրքահայ: Ոչ միայն Պարսկահայաստան, այլեւ՝ պարսկահայ:

Եւ ինչպէս շատ յաճախ առաջիններէն պոկուեցաւ վերջին մասնիկը ու մնաց միայն առաջինը, այսինքն՝ ոչ թէ Ռուսահայաստան, Թրքահայաստան եւ Պարսկահայաստան, այլ՝ Ռուսիա, Թուրքիա եւ Պարսկաստան, ճիշդ նոյն ձեւով նաեւ վերջիններէն պոկուեցաւ վերջին մասնիկը ու մնաց միայն առաջինը, ո՛չ թէ ռուսահայ, այլ՝ հոգիով ռուս, ո՛չ թէ թրքահայ, այլ՝ հոգիով թուրք, ոչ թէ պարսկահայ, այլ՝ հոգիով պարսիկ:

Մեր պատմութեան այս խաւար գիշերին էր,

որ ծնունդ առաւ Դաշնակցութիւնը՝ անհայրենիք, անազգ եւ անհայ մթնոլորտի մէջ, իբրեւ ժողովուրդի մը հայրենաշունչ ուժը:

Ծանր բեռ վիճակուեցաւ Դաշնակցութեան: Ախ-մինակ, ո՛չ թէ մէկ, այլ՝ քանի մը բռնակալութեանց դէմ ճակատելով. ո՛չ միայն օտարի, այլեւ՝ հարազատի դէմ կռուելով. պայքարելով ո՛չ թէ մէկ, այլ՝ բազմաթիւ ճակատներու վրայ, Դաշնակցութիւնը կոչուեցաւ շրջելու մեր բախտի անիւր եւ դառնալու մեր նորագոյն պատմութեան հայակերտ, ազգակերտ եւ հայրենակերտ բազուկը:

Վկա՛յ Դաշնակցութեան պատմութիւնը:

Կրօնները մեզ բաժնեցին իրարմէ, ու մենք դարձանք յարանուն համայնք. սակայն եկաւ Դաշնակցութիւնը եւ բոլոր յարանուանութեանց հետեւորդները համախմբեց միեւնոյն հովանիին տակ:

Բռնակալները հատուածեցին մեր ժողովուրդը, ու մենք դարձանք խորթ բազմութիւններ իրարու, բայց եկաւ Դաշնակցութիւնը եւ վերածնող ազգութեան նոր աւազանին մէջ վերամկրտեց մեր բոլոր հատուածները:

Թշնամին անդամահատեց մեր հայրենիքը, սակայն եկաւ Դաշնակցութիւնը եւ արիւնով երկնեց միացեալ Հայաստանի գաղափարը:

Ստրուկներ էինք եւ անազատ կեանքի վարժ, սակայն Դաշնակցութիւնը յեղափոխեց հայ մարդու նկարագիրը: Ձէնք տուաւ անոր ձեռքը եւ զայն դարձուց ազատութեան զինուոր:

Հանրային հին գործիչներէն հրապարակագիր Ռուբէն Բերբերեան (ոչ դաշնակցական) իր յուշերուն մէջ կը գրէ.

«Ես ունիմ բազմաթիւ առարկայական տրեւալներ, որոնք ինձ թոյլ են տալիս գալ հետեւեալ եզրակացութեան. եթէ ութսունական թուականների կեսերից սկսած չհիմնուէին նախ Հնչակեան, ապա Դաշնակցական կուսակցութիւնները, եւ եթէ հետագայում դրանք (մասնաւորապէս Դաշնակցութիւնը) քսան - երեսուն տարիներ չհրահրէին իրենց յեղափոխական գործելակերպով հայ ժողովուրդի ազատութեան ու Հայաստանի անկախութեան խնդիրը, ռուսահայ ազգաբնակչութիւնը տասը - քսան տարուան ընթացքին անհետ կորսուած կը լինէր ռուս համայնակուլ ալիքների մէջ»:

Աւելի քան յեղափոխական ու մարտնչող եղաւ մասնաւորաբար Դաշնակցութեան գործելակերպը:

Իր պայքարի նշանաբանը՝ «Մահ կամ Ազատութիւն», արդիւնքն էր այն ծանր առաքելութեան, որ Դաշնակցութիւնը առաւ իր վրայ:

Եւ այս նշանաբանը ընտրեց ո՛չ իբր բառ, այլ՝ իբր գործ. քարոզեց ո՛չ իբր խօսք, որ մեռեալ է առանց գործի, այլ իբր կենդանի գաղափար, որ



մահով մահը կը կոխէ անմեռ մնալու համար:

Պայքարի տարիներուն գործերով գաղափարներ ցանց, իսկ խաղաղ տարիներուն գաղափարներով գործեր ծաւալեց, դարձաւ մեր երկրի տէ ֆաքթօ իրացած, սակայն տէ ժիւրի չճանչցուած իշխանութիւնը:

Այսօր ունինք սերունդ մը, որ Դաշնակցութեան դրօշին տակ կարող է ներկայանալ իր ժողովուրդին եւ յայտարարել անոր.

- Մենք ո՛չ թէ կաթոլիկ ենք, լուսաւորչական կամ բողոքական, այլ՝ մենք հարազատ եւ «անձկալի եղբայր»ներ ենք միեւնոյն ընտանիքին, որ «բաժնուած էր մորկա»:

- Մենք ո՛չ թէ թրքահայ ենք, ռուսահայ կամ պարսկահայ, այլ՝ մենք Հայ ենք:

- Մեր լեզուն ո՛չ թէ արեւմտահայ կամ արեւելահայ է, այլ Հայ լեզու է:

- Մեր հայրենիքը ո՛չ թէ Թրքահայաստան է, Պարսկահայաստան կամ Ռուսահայաստան, այլ՝ Հայաստան է:

- Մենք ո՛չ թէ յաւիտենական եւ ինքնայօժար հպատակներ ենք այս կամ այն օտարին, այլ մենք պայքարող զաւակներն ենք վաղուան ազատ, անկախ եւ միացեալ Հայրենիքի:

Եւ եթէ անուրանալի է, որ մեր բզկտուած հայրենիքի իւրաքանչիւր մասին մէջ երկուքական բռնակալութիւններ նստած էին, մէկը՝ մեր ուսերուն, իսկ միւսը՝ մեր հոգիներուն մէջ, ապա անուրանալի է, որ անոնցմէ գոնէ մէկը՝ ներքին թուրքը, ներքին պարսիկը եւ ներքին ռուսը, պարտուած է այլեւս, եւ հայութիւնը հոգեպէս բռնած է վերածնութեան ճամբան:

Դաշնակցութիւնը այսօր հոգեւին ամբողջ-

ցած ու հայացած հայութեան, զաղափարօրէն ամբողջացած ու հայացած Հայաստանի ազատութեան եւ անկախութեան կենդանի խաչալի ստեղծիչն ու պայքարող ուժն է:

Պայքարի ամէնէն դժուարին մասը տարած ենք արդէն. բռնակալները մեր հոգիէն նետած ենք:

Սկսած է պայքարի միւս շրջանը, երբ հարկ է բռնակալները նետել նաեւ մեր ուսերէն:

1907ին Յարական Ռուսիոյ ոստիկանական բարձրագոյն մարմինը՝ Ոստիկանական Դեպարտամենտը գաղտնաբար կը տեղեկագրէր երկրի ահարկու նախարարապետին՝ Ստոլիպինի.

«Դաշնակցութեան կազմը կը պարունակէ իր մէջ բոլոր վարչութիւնները՝ օրէնսդիր, կրթական, վարչական, դատական, պատժիչ եւ գործադիր ֆունկցիաներով. ամենալայն տեւորութիւնը իր անհնազանդ անդամներու եւ թէ կազմակերպութեան թշնամի պետական պաշտօնեաներու նկատմամբ, ոստիկանութիւն եւ ռազմական ուժ:

«Կովկասի մամուլը ամբողջովին հայերու ձեռքն է:

«Կուսակցութիւնը ունի իր կանոնաւոր բանակը, զինուորները (բնագիրին մէջ ռուս գրերով գրուած է՝ «ՋԻՆՈՒՈՐՆԵՐ»), կազմակերպուած 16 տարի առաջ, որ յեղափոխական շրջանին կը հասներ 100,000 մարդու, բանակ մը, որու պահպանման համար կը ծախսուէր 10 միլիոն ռուբլի:

«Կուսակցութիւնը ունի զինապահեստներ եւ զինուորական դպրոցներ (Պուլկարիոյ մէջ եւ Ամերիկա), ուր կը վարժեցնէ, ի միջի այլոց, նաեւ ականներու գործածութեան: Կուսակցութեան ռազմական բաժինն ունի վերին աստիճանի կանոնաւոր կազմակերպութիւն, որուն մէջ կը մտնեն հետեւակներ, այրուձի, թնդանօթածիգ եւ խրամահատ մասեր:

«Կուսակցութեան դրամական միջոցները կը հայթայթուին անդամատուրքէ, կամովին նուիրատուութիւններէ, էքսպրոպրիացիաներէ:

«1907ին Դաշնակցութիւնը ունէր 165 հազար անդամ, որոնք ընդհանուր առմամբ կուսակցական գանձարկղը կը մտցնէին տարեկան մէկ միլիոն ռուբլի»:

Ոստիկանական Դեպարտամենտի այս տեղեկութիւնները կը վերաբերէին Դաշնակցութեան միայն մէկ, բաղադրատարր թոյլ հատուածին՝ Անդրկովկասի:

Ոչ շարքայիններու սպորտային բանակն ենք մենք: Նոյն կառքին լծուած, նոյն գաղափարականին ծառայող, որդեգրած նոյն ուղին՝ մեր մարդկային ու ազգային սրբազնագոյն իրելայներու իրազործման չգտող: Դաշնակցականներու հեպ կրնանք միշտ համաչայն չըլլալ, բայց ենք ու պիտի մնանք: Դաշնակցութեան հեպ, կ'սպրինք ու պիտի ապրինք Դաշնակցութեան համար, մինչեւ վերջ, մինչեւ մեր կեանքին վախճանը: Հասկնալի կը դառնայ ուստի, թէ ինչո՞ւ մենք կ'ուրախանանք իր յաղթանակներով, կը հրճուի մեր հոգին իր հերոսական արարքներով, եւ թէ ինչո՞ւ կը փրփրինք, կ'արիւնի մեր սիրտը, երբ ան շահութիւններու կը մատուցուի, չախտող գործեր կը փեսնէ:

ԿԱՐՕ ՓՈԼԱՏԵԱՆ



Տարաբախտաբար բոլորովին այսպէս չէր եթէ հայութիւնը իր բոլոր հատուածներով եւ Ոստիկանական Դեպարտամենտի մատնանշած չափերով կազմակերպուած ըլլար, մենք թերեւս բարենորոգութեանց տիրացած ըլլայինք մինչեւ մեծ պատերազմ՝ այդ պատերազմին Ապրիլ 24էն խուսափելու եւ Մայիս 28ը աւելի՛ հաստատուն ձեւով ձեռք ձգելու համար:

Սակայն ոստիկանական տեղեկագիրը ճիշդ է այն իմաստով, որ իրաւամբ Դաշնակցութիւնը վերստեղծած էր հայ «զինուոր»ը եւ մարտական ոգի դրած՝ հայ մարդու մէջ:

Խանասոր, Սասուն, Պանք Օթոման, Երլտըզ, Ֆետայական անթիւ ու անհամար կռիւներ, ահաբեկչական ցնցող աքթեր թէ՛ ներսը՝ դաւաճանի եւ թէ դուրսը՝ թշնամիի նկատմամբ, համաժողովրդական ծառայում ցարական բռնակալութեան դէմ՝ եկեղեցական կալուածներու բռնագրաւման առթիւ, հայ - թաթարական կռիւներ, իսկ աւելի ուշ՝ Ուրֆա, Շապին Գարահիսար, Սուէտիա, Վան, Ղարաքիլիսա, Բաշ Ապարան, Սարգարապատ, Հերոսական կռիւներու ամբողջ շղթայ մը՝ օր մը Մայիս 28ի եւ Փետրուար 18ի փառքերը կերտելու համար:

Այս ոգին մեռած չէ այսօր, ո՛չ հոն՝ հայրենիքի մէջ եւ ոչ ալ հոս՝ գաղթախարհի մէջ:

Պոլսոյ մէջ, սահմանադրութենէն ետք, միայն մայրաքաղաքի հայ մտաւորականներէն 1000 հոգի անդամագրուած էին Դաշնակցութեան մէջ: Իր բանախօսութիւններէն մէկուն մէջ այս երեւոյթին անդրադառնալով՝ Ակնուսի կը յայտարարէր.

«Այն փաստը, որ մի տեղում ու մի ժամանակում 1000 մտաւորականներ անդամագրուած են մի հոսանքի, այդ հոսանքը այլեւս կուսակցութիւն չէ, այլ ազգ է»:

Ձեւափոխելով այս դարձուածքը՝ մենք պիտի ըստինք.

- Մի տեղում ու մի ժամանակում, ուր այնքան զոհեր կան, որքան Դաշնակցութիւնը տուաւ, այդ զոհերը զանգուածը այլեւս անդէմ բազմութիւն չէ, այլ՝ դիմորոշուած ազգ, որ

որոշ իտէալ կը հետապնդէ եւ անոր ի խնդիր արիւն կը թափէ:

Ազգայնօրէն պետականացող ուժ մը, որ կը ձգտի իրաւունքը փաստ դարձնել եւ հոգեպէս գրաւուած հայրենիքը ձեռք ձգել նաեւ մարմնապէս:

«Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տոգորուած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաեւ կոուելու անսասան վճռողականութիւն եւ կապուած, միացած է դարերով սնուած ու պահպանուած ընդհանուր բնագոյների ու զգացումների առողջ զարկերակով», կը յայտարարէր մեր Քրիստափորը (Քր. Միքայէլեան, «Յեղափոխականի մտքերը», էջ 122 - 123):

Եւ կը տաղնապի այսօր Դաշնակցութիւնը ո՛չ անոր համար, որ «անելիք չունի», այլ անոր համար, որ շափագանց շատ «անելիք»ներ ունի:

Ո՛ւր է Դաշնակցութեան ուժին գաղտնիքը:

Հո՛ն, որ կ'ուզէ առնել զոհելով, արիւն կը թափէ հայրենիք ձեռք ձգելու համար:

Չկայ աւելի ահաւոր ուժ, քան զոհը, աւելի հզօր բեմբասաց, քան անշնչացած նահատակը, աւելի ներշնչող քարոզիչ, քան խաչեցեալը:

Դաշնակցութեան գաղափարները նախ իր նահատակները կը քարոզեն:

Կը քարոզեն ողջերը՝ անոնց անունէն:

Եւ Դաշնակցութիւնը այնքան աւելի պիտի ծաւալի եւ ուճանայ, որքան աւելի իր ողջ քարոզիչները իր նահատակներու ուղիով ընթանան:

Ուր զոհողութիւն չկայ, հոն ընտանիք չկայ: Այսպէս է նաեւ ազգերու եւ կուսակցութեանց համար. անոնց կեանքի սղբերը զոհողութիւնն է:

Միայն այս ոգին վառ պահելով կարելի պիտի ըլլայ պահել մեր վերջին ժամանակաշրջանի պատմութեան կարեւորագոյն վաստակը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Վ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ

ՈՒԺԻՆ ԵՒ ՀՄԱՅՔԻՆ ՎԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԱՆՇՕՇԱՓԵԼԻՆ

... Դաշնակցական լինելու մէջ անշօշափելի մի բան կայ, որ եթէ հաշուի չառնենք, անկարելի կը լինի բացատրել շատ շատերի պատկանիլը այդ կուսակցութեան: Բայց որովհետեւ այս անշօշափելին խիստ դժուար է բացատրել, ուստի եւ այն հարցին, թէ ինչո՞ւ ենք մենք դաշնակցական, կարելի չէ լինում գոհացուցիչ պատասխան տալ:

Իմ շրջագայութիւնների ժամանակ բազմաթիւ առիթներ եմ ունեցել դէմ առ դէմ գտնուելու այս անշօշափելի հետ՝ առանց կարենալու բանաձեւել նրա էութիւնը:

Տարիներ առաջ Ամերիկայի քաղաքներից մէկում «գործ» ունեցայ մի «դրսի ընկերոջ» հետ, որ, զանազան թիւրիմացութիւնների պատճառով, հեռանալով տեղական կազմից՝ շարունակում էր իրեն դաշնակցական համարել: Աշխատում էի համոզել նրան, որ ըստ մեր կազմակերպական օրէնքների, կազմից ելածը չի կարող դաշնակցական լինել:

- Գիտէ՞ք ինչ, ընկեր Զ., պատասխանեց այս «դրսեցին»: - Քրիստափոր մը կրնայ իմ հոգու մէջ Դաշնակցութիւն դնել: Սակայն, եթէ այսօր Քրիստափորն ալ գերեզմանէն յարուցիւն առնէ՛, չի կրնար այլեւս Դաշնակցութիւնը հանել իմ հոգիէն...:

Նոյն Ամերիկայի ուրիշ մի քաղաքում ականատես եղայ հետեւեալ դէպքին.

Ինչ որ մի կուսակցական հանգանակութեան առթիւ տեղական կազմը 35 տուարի պարտականութիւն էր դրել մի ընկերոջ վրայ. ընկերը գտնում էր, որ այդ պահանջը չափազանց է, եւ որ ինքն իր վիճակն ունեցող միւս ընկերների պէս 25 տուար միայն կարող է վճարել: Նրա առարկութիւնը չընդունուեց, եւ մեր «պարտապանը», ջղայնացած ատենապետի անզիջող վերաբերմունքէն, բացազանչեց.

- Քանի որ կ'անտեսէք իմ արդար առարկութիւնը, ես այդ 25 տուարն ալ չեմ վճարեր:

- Եթէ չվճարես, իբրեւ պարտազանց մէկը՝ կը քաշուիս Դաշնակցութենէն,- նկատեց խստադէմ ատենապետը:

- Շատ լաւ, կը քաշուիմ,- պատասխանեց ընկերը եւ գլխարկն առնելով ձգեց ժողովի սրահը: Չանցած երկու վայրկեան, խուռված ընկերը, գլխարկը ջղայնօրէն տրորելով ձեռքին մէջ, ներս մտաւ ժողովի սրահը եւ դիմեց ինձ.

- Ահա այսպէս են ասոնք, ընկեր Զ.: Անիծածները գիտեն, որ չեմ կրնար հեռանալ Դաշնակցութենէն, ուստի այսպէս կը խեղդեն զիս:

Ընդհանուր քրքիջի մէջ ընկերը վճարեց 35 տուարը եւ քրտինքը սրբելով նստաւ տեղը:

Պաղտատում «գործս» նորից մի «դրսի ընկերոջ հետ էր»: Յանդիմանում էի նրան, որ յիմար պատճառներով հեռացել էր շարքերից, հետեւաբար եւ Դաշնակցութիւնից:

- Ի՞նչպէս թէ Դաշնակցութիւնից, ընդմիջեց

ինձ ընկերը՝ անկեղծ զարմանքով:

Տուեցի անհրաժեշտ բացատրութիւնները:

- Ատանկ բան չկայ, ընկեր Զ., վրայ բերեց «դրսեցին»: Ան որ դաշնակցական է, մօրմէն այդպէս ծնած է եւ չի կրնար դաշնակցական չլուլ:

Պուկարիայի քաղաքներից մէկում, բազմաթիւ նորեկների ընդունելութեան առթիւ, մի շքեղ հանդէս էր կազմակերպուած: Կարգադրիչները որոշել էին, որ նորեկների երդման արարողութեան ժամանակ, բեմի վրայ, նախագահութեան կողքին պատուոյ տեղ բռնեն տեղական կազմի ամենահին ընկերները: Ընդառաջ գնալով իմ ցանկութեան՝ նրանք այս հին ընկերների շարքում աթոռ էին յատկացրել մի ծերունի «համալ»ի, որ երկար տարիներից խուռված եւ քաշած էր տեղական կազմից, բայց մի վայրկեան իսկ չէր դադարում իրեն դաշնակցական համարելուց, իսկ իր գոհաբերութիւններով գերազանցում էր իր «նախկին» ընկերներից շատերին:


Վարագոյրը բացուելուց մի վայրկեան առաջ կարգադրիչներից մէկը մօտեցաւ ինձ եւ յուզւած ձեւով պատմեց, որ իմ «փրօթեթէ»ն (պաշտպանեալ) չի ուզում տեղ բռնել իրեն յատկացուած աթոռի վրայ եւ «սքանտալ» կ'ընէ:



Աննկատելի անցայ բեմի ետեւը եւ տեսայ, որ մի քանի ընկեր քաշքշում էին ծերունի ափհահային դէպի բեմ՝ առանց կարողանալու նրան շարժել տեղից:

Պարզուեց հետեւեալը: Ընկերներից մէկը կատակով ասել էր մեր «նախկին»ին, թէ քանի որ խոստացել է ինձ նորից մտնել մեր կազմի մէջ, ուստի նրան եւս, նորեկների հետ, պիտի երդուընցնեն: Պէտք եղաւ մեծ ճիգ թափել հանդարտեցնելու համար ծերունու յուզմունքը, որ պէսզի նա համաձայնի իր տեղը բռնել:

Յաջորդ օրը ուզեցի իմանալ նրա յուզման պատճառը: Ափսո՛ս, որ չեմ կարող վերարտադրել նրա խօսքերը իր բարբառով: Նրա ասածի իմաստն էր, որ ինքը արդէն մի անգամ «մկրտուած է դաշնակցական» եւ որ եթէ նորից հարկադրուէր երդուելու, դրանով պիտի խոստովանած լինէր, որ ինք մինչեւ հիմա «Վասակ է եղած հայութեան համար»... Ես չկարողացայ ըմբռնել, թէ հոգեկան որպի-



սի ապրումների հետեւանքով այս մարդու մէջ Դաշնակցութիւնը եւ Հայութիւնը նոյնացել էին այն աստիճան, որ դաշնակցական չհամարուելը նրա աչքում դարձել էր ազգադաւաճութեան կամ «վասակութեան» պէս մի ստորնութիւն:

Մի վերջին օրինակ էլ Սուրիայից: Այդտեղ ես առիթ ունեցայ ծանօթանալու մի ընկերոջ, որի համար ասում էին, թէ նրա ամբողջ անհատական կեանքը ամփոփուած է երկու սիրոյ մէջ, սէր դէպի իր ծերունի մայրը եւ սէր դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Ընկերական մի մտերմիկ հաւաքոյթի մէջ այս սակաւախօս կամ աւելի ճիշդ անխօս ընկերոջ լեզուն, ինձ համար անսպասելիօրէն, յանկարծ բացուեց: Այդ օրուան խիստ ոգեւորիչ կուսակցական ձեռնարկներից, թէ վերջին մտերմական հաւաքոյթի ջերմ եւ ընկերական մթնոլորտից ազդուելով՝ մեր «Ջաքարէն» տեղից ելաւ, գինու բաժակը ձեռքին.

- Ախպար, այս կուսակցութիւնը, այս կուսակցութիւնը, այս կուսակցութիւնը... Ես միշտ կը խորհիմ, թէ ինչ կ'ըլլայ հայ ժողովուրդին վիճակը, եթէ Դաշնակցութիւնը չըլլայ - հապա իմ վիճակս ի՞նչ կ'ըլլայ, իմ վիճակս ի՞նչ կ'ըլլայ... Երեւութապէս կատակով, բայց հապէս խորին ապրումով եւ մեծ պոռթկումով արտասանուած այս խօսքերը, յիշում եմ, շատ ցնցող տպաւորութիւն ձգեցին ինձ վրայ:

Այս դէպքերի եւ նման հարիւրաւոր այլ դէպքերի առթիւ շատ եմ մտածել այն անշօշափելի կապի մասին, որ մեզ ամէնքս շղթայում է Դաշնակցութեանը, առանց կարենալու որեւէ բանաձեւում գտնել նրա համար: Ուստի շատերի միտքը շարչրկող այն հարցին, թէ ինչո՞ւ ենք մենք դաշնակցական, ես մի պատասխան եմ գտել մինչեւ հիմա:

Մենք դաշնակցական ենք, որովհետեւ չենք կարող դաշնակցական չըլլալ:

Ճիշդ այնպէս, ինչպէս Մարթին Լուտէրը իր համոզուներների վրայ բռնացող հաւատաքննիչներին պատասխանում է.

- Այսպէս եմ ես եւ չեմ կարող այլ կերպ լինել: